№ 145 Օգոստոսի 7 (19) 1881 Օգոստոսի 7 (19) № 145

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Գօրուց։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Հայոց խնդիր։ Անգլիա։ Գերմանիա։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Գերմանիայից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

Օգոստոսի 3-ին

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է Ուփլիսցիխէ գիւղը, որ գտնվում է Գօրուց դէպի արեւելք 5 վերստ հեռաւորութեամբ։ Ընթերցողը նոյնպէս գիտէ, որ այս գիւղի հայերը յունադաւանութիւն էին ընդունում այնտեղի ծխատէր Բարամեանց քահանայի վատ վարմունքի պատճառով։ «Մեղուն» ուղում էր այն լուրը փարատել. բայց ինչպէս կը փարատէր երբոր հաստատ լուր էր։

Ուփլիսցիխէ գիւղի բնակիչները բոլորը հայեր են, և այնտեղ ոչ մի վրացի չը կայ։ Վրացիներից ոչ մէկը չէ համարձակվում գնալ և բնակվել այնտեղ, որովհետև վախենում են այն խօսքից, որ ասում են թէ եթէ վրացին գնայ և բնակվի այնտեղ կենդանի չի մնայ։ Ասում են իբր թէ երբեմն վրացիք գնացել են այնտեղ բնակվելու, բայց չէ անցել մի փոքր ժամանակ բոլորը կոտորվել են։ Ուփլիսցիխէի բնակիչները նեղ տեղ ընկնելով իրանց քահանայից, խնդիր էին տուել հոգևոր իշխանութեանը, որով խնդրում էին հեռացնել այն քահանային, ապա թէ ոչ պատրաստ էին ընդունելու յունադաւանութիւն։ Խնդրի հետ ուղարկել են իրանց ուղղած Թիֆլիսի Նահանգապետին խնդրի պատճէնը, որով խնդրում էին Նահանգապետից իրաւունք տալ իրանց ընդունել յունադաւանութիւնը։ Բայց վերջը իմանում ենք, որ թէպէտ Նահանգապետի խնդրի պատճէնը ուղարկել են հոգևոր իշխանութեանը, բայց Նահանգապետին իսկական խընդիրը այլ ես չեն ուղարկել։

Հոգևոր իշխանութիւնը լսել է ուփլիսցիխեցոց խնդիրը և Բարամեանց քահանային Ուփլիսցիխէից տեղափոխել է Դիրբ գիւղը, որ գտնվում է Գօրուց 30 վերստ հեռաւորութեամբ։ Լսում ենք, որ տինիսխիդեցիք իմանալով Բարամեանց քահանայի վատ վարմունքը և Դիրբի հեռաւորութիւնը Տինիսխիդից, որ չէ կարողանում 30 վերստից գալ և հովուել իրանց՝ չեն ընդունում։ Ի հարկէ տինիսխիդեցիք չեն կարող առանձին քահանայ պահել և սրանք ուզում են որ իրանց հովուի Գօրու քահանաներից մէկը։ Իսկ Ուփլիսցիխէում նշանակվեց Դիրբի Գուլեանց քահանա, որը Բարամեանցից առաջ հովվում էր ուփլիսցիխեցիներին։ Լսում ենք, որ Գուլեանցին Ուփլիսցիխէ նշանակելու ժամանակ Մամբրէ վարդապետը պայման է կապել նրա հետ, որ 120 ր. ուղարկի իրան, հակառակ դէպքում կը տեղափոխվի Տղվիաւ գիւղը, որ գտնվում է Գօրուց 12 վերստ հեռաւորութեամբ։ Գուլեանց քահանան չունենալով այդքան փող, որ միանուագ ուղարկէր Մամբրէին, ուղարկել է Մամբրէին միայն 30 ր. Միքայէլ քահանայ Սիմէօնեանցի ձեռքով, որը կարծեմ հէնց այդ նպատակով էր ուղարկած Մամբրէից, իսկ մնացած 90 ր. խոստացել է յետոյ ուղարկել և չը գիտեմ այն էլ ուղարկեց թէ ոչ։ Փառք ու պատիւ Թիֆլիսում Մամբրէ վարդապետին, իսկ Էջմիածնում Մանկունի եպիսկոպոսին։ Այժմ Գուլեանց քահանան յուսահատութեան մէջ է, դեռ ինքն էլ չը գիտէ Ուփլիսցիխէում կը մնայ թէ կը տեղափոխվի Տղվիաւ։ Ի հարկէ այդ կախված է Մամբրէից։ Խեղճ ժողովուրդն էլ չէ իմանում թէ ինքը լիակատար իրաւունք ունի իր հովիւը ընտրելու և ոչ թէ Էջմիածինը։ Երբ Գուլեանցը տեղափոխվեց Ուփլիսցիխէ գիւղը, Դիրբեցիք յուսահատված մնացին, վերջապէս ինչպէս որ եղաւ այս քահանան համոզեց նրանց թէ հոգևոր իշխանութեան կամքը այսպէս է։

Այս տարի վառեան գիւղում, որ գտնվում է Գօրուց դէպի արևմուտք 8 վերստ հեռաւորութեամբ, ընդունել է յունադաւանութիւն Ղազարոս Խիզանեանց անունով մի մարդ իր ընտանիքով։ Սրա պատճառն այն է որ Բուիս գիւղի Յարութիւն քահանան, որ հովվում է և վառեանցիներին, լաւ չէ վարվում ժողովրդի հետ և ամենայն ինչ ուզում է կողոպտել նրանից։ Ղազարոս Խիզանեանցը կալի ցորեն պարտ է եղել այս քահանային և չէ ունեցել որ տար և խոստացել է տալ, եթէ փոքր ինչ կը սպասի։ Բայց սա չէ սպասել և ստիպել է որ անշուշտ շուտով տայ, եթէ ոչ ոտ չի դնի նրա տունը։ Այսպէս էլ եղաւ։ Զանցաւ մի փոքր ժամանակ, այս մարդը որդի ունեցաւ և հրաւիրեց իր քահանային որ տուն օրհնի, բայց քահանան չէ գնում։ Այստեղի գիւղերում այնպիսի սովորութիւն կայ, որ երբ երեխան ծնվեց, եթէ իսկոյն տունը չը օրհնվի, պիղծ են համարում այն տունը և ոչ ոք չէ համարձակվում գնալ այնտեղ մինչև չօրհնվի։ Խիզանեացը ճարահատեալ դարձեալ հրաւիրում է իր քահանային և ասում է թէ եթէ դու չես գայ՝ վրաց քահանային կը բերեմ, դարձեալ չէ գնում։ Վերջապէս Խիզանեանցը յուսահատված հանում է չորերը կանգնում է առուակի ափը, հրաւիրում է վրաց քահանային և մկրտվում է վրաց ծէսով, սրան հետևում է և իր ընտանիքը, հետևելու են և միւսները, նրանք էլ նեղացած լինելով Բուիսի Յարութիւն քահանայից։ Այսպիսի օրինակներ շատ կան, բայց որ մէկն ասեմ, կամ որ մէկը գրեմ։

Դարձնում ենք սրա վրա հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը և խնդրում ենք որ ուշադրութիւն դարձնի հայ զաւակների վրա, իր որդոց վրա, հետաքրքրվի այս բաներով, տէրութիւն անի, խնամք տանի, արժանաւոր քահանաներին վարձատրի և անարժաններին պատժի։ Թէ չէ Վրաստանի գիւղերի հայերը կորած են թէ կրօնով և թէ ազգով, որովհետև ով որ հայլուսաւորչականներից մի այլ դաւանութիւն է ընդունում, կարծում է թէ ազգով էլ փոխվեց։ Դարձեալ խնդրում ենք հոգևոր իշխանութեանը, որ չուտով նշանակի այստեղ մի օրինաւոր յաջորդ, և մի և նոյն ժամանակ հրամայի մանգալ գիւղերը և ոչ թէ տանը նստի և աչքերը դէպի դուռն ունենայ դարձած թէ արդեօք գիւղի քահանաներից ոչ մէկը չէ՞ գալիս ընծաներով։ Յաջորդի պարտքն է հոգևոր կառավարութեան կանոնաւոր ձև տալը և մանգալ գիւղերն և այսպիսի խռովութեանց և անբաւականութեանց առաջն առնելը։

Գօրեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օր չէ անցնում որ մեր խմբագրատանը չը ներկայանային խնդրատու բազմաթիւ մարդիկ, որոնցից մինը նիւթական օժանդակութիւն է խնդրում, միւսը խնդրում է որ մենք պաշտօն տանք նրան, երրորդը որ մենք նրա որդուն ուսում տանք, և այլն։ Ո՞ւր են մեր հարուստները, ո՞ւր է մի հայոց բարեգործական ընկերութիւն։ Մենք մեր կարողութեան չափ արդէն անում ենք՝ համ թատրոնով, գրչով ենք աշխատում, համ էլ մեր գրպանից հազարներ ենք ընում լրագրի դէֆիցիտի վրա։ Մնացածը թող ուրիշներն անեն։

—

Յայտնի է որ այս բօպէիս կան Ռուսաստանում չորս թէ հինգ հրէական օրգաններ ռուսերէն լեզուով, որոնք ամեն հարցերում քաջուքերելու վրա, թողնենք դրանց հանգիստ և մեր աչքերը դարձնենք մեր մշակ, երեսի քրտինքով օրական հացը վաստակող եղբարց վրա. մեր, այսինքն, ազգի ոյժը նրանք են, ձեզ համակրող և ձեզ նպաստողը նրանք են, նրանց քրտնքի կաթիլներն են, որ հատիկ հատիկ թափվելով ազգային աւազանի մէջ՝ կազմում են յորդահոս առու և լուանում, մաքրում ազգի վէրքերը, նրանք են ազգի այն գետակները, որ իրանց արագ ընթացքով պտրտցնում են ազգի ջաղացները. մինչդեռ մեր ինտելիգենցիային պատկանող պարոնները ազգի համար ուրիշ ոչինչ չեն, բայց եթէ այն լճակները, որոնք գեղեցիկ մարգագետինների վրա զետեղված՝ միայն անցուդարձողների աչքերին գեղեցիկ տեսարան են ներկայացնում, ոչինչ օգուտ չը բերելով, դրանց ջուրը անգամ չէ կարելի խմել, որովհետև միշտ մէկ տեղ կանգնելով և չը նորոգվելով՝ նա հոտել է։ Եթէ ասածս սուտ է և զրպարտութիւն ապա թող ապացուցանեն այդ պարոնները դորա հակառակը, թող ցոյց տան դրանք փարիզի ուսանողներին իրանց համակրութիւնը նրանց ընկերութեանը նպաստելով. բայց ցոյց տան գործով և ոչ միայն խօսքով, ահա լաւ պատեհ. ընկերութիւնը կարօտ է թէ նիւթական օգնութեան, թէ հիմնաւոր, առողջարար խորհուրդների, թող սթափեն դրանք իրանց վրայից այդ սպանիչ անտարբերութիւնը ու մահացուցիչ թմրութիւնը և ձեռք կառկառեն իրանց եղբայրներին, մի խօսքով թող ճանչնան և կատարեն իրանց բարոյական պարտքը. այն ժամանակ ես մեղայ կը գամ դրանց առաջ և դրանց ձեռքերը համբուրելով ներողութիւն կը խնդրեմ սխալանաց համար։

Փարիզ գտնվելով՝ ես չէի կարող օգուտ չը քաղել հանգամանքէն և չայցելել մեր վերջին թագաւոր Լևոն Զ-ի գերեզմանը, ուստի մէկ օր պ. Ռաֆայելեանի ընկերութեամբ գնացի Սէն-Դէ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

(Վերջ)

«Ցեսնելով՝ որ շատերը մեզ չեն հասկացել և գուցէ շատերը չեն համակրեր մեր կանոնագրի զանազան կէտերին, մենք որոշեցինք մեր ազգային լրագրերի միջոցաւ յայտարարել ընկերութեանս նպատակը և նորա կանոնագրութեան գլխաւոր կէտերը մեր ազգայնոց և խոնարհաբար խնդրել թէ բարեսիրտ խմբագիրներէն և թէ առհասարակ բարեացակամ ազգայիններէն, որ նրանք չը խնայեն մեզմէ իրանց կարծիքը և դիտողութիւնները, տան մեզ խորհուրդ և ցոյց տան միջոցներ գործը առաջ տանելու։ Ներկայ տարւոյս սեպտեմբեր ամսոյ 11-ին, ընկերութեանս տարեդարձի օրը, մենք ընդհանուր ժողով մի պիտի անենք և մեր կանոնագիրը պիտի վերանայենք, յուսամք, որ մինչև այդ օրը մեր ազգայինք չեն զլանար մեր խնդիրքը կատարել. ինչպէս է ձեր կարծիքը, բարեկամ, այս գաղափարի մասին»։

—Շատ գեղեցիկ միտք է, պատասխանեցի ես, բայց էլի մտքովս անցաւ, խեղճ, խեղճ երիտասարդներ, ինչպէս աղնիւ է ձեր սիրտը և միանգամայն ինչպէս պարզ. դուք կարծում էք թէ ձեր յայտարարութեան միւս օրը աշխարհիս չորս կողմէն վեր կը կենան հայերը ու իրանց առողջ դատողութիւնը, իրանց օգտաւէտ խորհուրդները ձեզ կառաջարկեն, բայց «թէ խաչն իմն է, նորա զօրութիւնը ես գիտեմ», ձեր ձայնը կը լինի ձայն բարբառոյ յանապատի. այո՛, կը կարդան ձեր յայտարարութիւնը, կիմանան ձեր թախանձանօք խնդիրքը, բայց նոյն րոպէին մոռացութեան գետի մէջ կը խեղդեն զայն «դարդակ բան է, ֆանֆարոնութիւն է» ասելով։ Դուցէ գտնվեն ոմանք, որոնք կատարեն ձեր խնդիրքը, բայց զգոյշ կացէք, այնպիսի պրոգրամներ ձեզ կուղարկեն, որ դուք կը շտապէք ձեր յայտարարութիւնը յետ առնելու, գիտէք որ հայերը սիրում են միայն պրոգրամներ տալ։ Դուք յոյս էք դնում մեր բարձր ուսում առածների վրա, դուք կարծում էք թէ ձեր բարի ցանկութիւններն ու ազգօգուտ գործունէութիւնը նրանց սրտերում աւելի շուտով արձագանք կը գտնեն, բայց սխալվում էք, աղնիւ բարեկամներ, նրանք օտար են ձեզ, դադարեց բաբախել նրանց կուրծքում այն սիրտը, որը բաբախում էր ուսանողական աթոռի վրա նստած ժամանակը, նրանք վերկացան այդ աթոռից, վայր իջան իրողական կենաց շրջանը և մոռացան շուտով իրանց սրտի քաղցր բաբախումը, այժմ այդ սրտերը բաբախում են իրանց տէրերի գրպաններին համեմատ, նրանց տակտով, զանազան ալիւրներ, տեսակ տեսակ որէյլներ անելով. որքան էլ մեծ ուշադրութեամբ ականջ դնէք այդ երաժշտութեանը ոչ մի ազգային նոստա չէք լսի նորա մէջ։ Զէ՞ք հաւատում ասածիս, կասկածում էք սրա ճշմարտութեանը, ոչինչ, ես չեմ նեղանում, յուսամ, որ փաստին կը հաւատաք, արդարութեան դէմ չէք մեղանչի, համեցէք, բաց արէք ձեր ընկերութեան անդամոց ցուցակը և նայեցէք բարձր ուսումնարաններից, կամ, որ կոչում էք, ինտելիգենցիայից քանի՞ անձինք են գրվել ընկերութեանդ անդամ. կատարեցէք խնդիրքս և ես ձեզ իրաւունք եմ տալիս, որ եթէ երեք—չորսէն աւելի անուն գտնէք, վեր առէք այդ ցուցակը և աչքս կոխեցէք։ Բայց, փառք Աստուծոյ, աչքս անվնաս մնաց և ինքներդ համոզվեցիք, որ ասածս ուղիղ է. սակայն տեսնում եմ, որ դուք երկմտութեան մէջ էք, կատարելապէս հաւատ չէք ընծայում ասածիս, ասում էք որ մէկ օրինակով ոչինչ չէ կարելի ապացուցանել, շատ գեղեցիկ, մի ուրիշ օրինակ բերեմ. վեր առէք «Մեղուն», «Մեղու Հայաստանի» և ազգային այլ լրագիրների անցեալ տարուայ համարները և ուշադրութեամբ փնտռեցէք նրանց մէջ ի թիւս սովեալներին նպաստողների մեր ինտելիգենցիայի, մեր բարձր ուսում ստացած և այսօր բարձրութեան մէջ ապրող անձանց անունները, որքան կը գտնէք, շատ քիչ։ Է՛հ, ազնիւ բարեկամներ, մի հարկադրէք ինձ, որ ուրիշ օրինակներ բերեմ, նրանք շատ են, բայց թէ ժամանակը չէ ներում և թէ իմ ու ձեր սրտերին նեղութիւն է պատճառում ճշմարտութեան խոստովանելը, ուրեմն աւելի լաւ է լռենք...։ Դուցէ այս ես ասէք, թէ այդ անձինքը բոլոր սրտով համակրում են ձեզ, բայց նրանց նիւթական միջոցները չեն ներում ձեզ օգնելու. դադարեցէք, խնդրեմ, հաւերն անդամ կը խնդան ձեր ասածին. չը կարողանալ որ և իցէ 12 ֆրանկ ($4^1/_2$ ռուբլի) տարեկան վճարել ձեր ընկերութեանը, այդ մի և նոյնն է, թէ սանդուղքի մէկ աստիճանից չը կարողանալ միւսի վրա ելլել. և ինչ է, ասէք խնդրեմ, $4^1/_2$ ռուբլին բժշկի համար—մէկ անգամ հիւանդի երակը բռնել, իրաւաբանի համար—երեք խօսք, ինժիների, տեխնիկի համար—մատիտի մէկ գիծ, երկրագործի համար—մէկ թիզ գետին, վաճառականի համար—մէկ արշին կտաւ և այլն և այլն։ Ո՛չ, բարեկամներ, թողնենք հանգիստ մեր ինտելիգենցիան, մեր բարձր ուսում ստացած պարոններին, առանց ձեր ընկերութեանն էլ նրանց գործերը շատ են. չէ՞ որ նրանք պէտք է մտածեն իրանց օգուտների, շահերի վրա, իրանց կենսական պիտոյքների մասին, շահաւէտ պաշտօններ և ամենայն տեսակ կօնֆորտներ ձեռք բերելու վրա, Թողնենք դրանց հանգիստ և մեր աչքերը դարձնենք մեր մշակ, երեսի քրտինքով օրական հացը վաստակող եղբարց վրա. մեր, այսինքն, ազգի ոյժը նրանք են, ձեզ համակրող և ձեզ նպաստողը նրանք են, նրանց քրտնքի կաթիլներն են, որ հատիկ հատիկ թափվելով ազգային աւազանի մէջ՝ կազմում են յորդահոս առու և լուանում, մաքրում ազգի վէրքերը, նրանք են ազգի այն գետակները, որ իրանց արագ ընթացքով պտրտցնում են ազգի ջաղացները. մինչդեռ մեր ինտելիգենցիային պատկանող պարոնները ազգի համար ուրիշ ոչինչ չեն, բայց եթէ այն լճակները, որոնք գեղեցիկ մարգագետինների վրա զետեղված՝ միայն անցուդարձողների աչքերին գեղեցիկ տեսարան են ներկայացնում, ոչինչ օգուտ չը բերելով, դրանց ջուրը անգամ չէ կարելի խմել, որովհետև միշտ մէկ տեղ կանգնելով և չը նորոգվելով՝ նա հոտել է։ Եթէ ասածս սուտ է և զրպարտութիւն ապա թող ապացուցանեն այդ պարոնները դորա հակառակը, թող ցոյց տան դրանք փարիզի ուսանողներին իրանց համակրութիւնը նրանց ընկերութեանը նպաստելով. բայց ցոյց տան գործով և ոչ միայն խօսքով, ահա լաւ պատեհ. ընկերութիւնը կարօտ է թէ նիւթական օգնութեան, թէ հիմնաւոր, առողջարար խորհուրդների, թող սթափեն դրանք իրանց վրայից այդ սպանիչ անտարբերութիւնը ու մահացուցիչ թմրութիւնը և ձեռք կառկառեն իրանց եղբայրներին, մի խօսքով թող ճանչնան և կատարեն իրանց բարոյական պարտքը. այն ժամանակ ես մեղայ կը գամ դրանց առաջ և դրանց ձեռքերը համբուրելով ներողութիւն կը խնդրեմ սխալանաց համար։

Փարիզ գտնվելով՝ ես չէի կարող օգուտ չը քաղել հանգամանքէն և չայցելել մեր վերջին թագաւոր Լևոն Զ-ի գերեզմանը, ուստի մէկ օր պ. Ռաֆայելեանի ընկերութեամբ գնացի Սէն-Դէ-

թեամբ պաշտպան են հանդիսանում հրէաների իրաւունքների։ Բայց Մոսկվայի կամ Ս. Պետերբուրգի հարուստ հայերից ոչ մին չը գտնվեցաւ որ այնքան աղնիւ լինէր ռուսերէն լեզուով թէ կուզ մի չաբաթաթերթ հիմնելու, որ լինէր հայոց օրգան, ինչպէս մենք շատ անգամ առաջարկեցինք։ Մենք Անանովի կամ Սանասարովի պէս միլիոններ չունենք, բայց միգանից, Թիֆլիսի հայ խմբագիրներից ամեն մէկը հազարներ է զոհում իր հրատարակութեան տարեկան դէֆիցիտը ծածկելու համար, իսկ մի Անանով, մի Սանասարով, որոնք միլիոներ ունեն, մինթէ նոյնը չեն կարող անել, մանաւանդ որ մի փոքր չաբաթաթերթ շատ ծախս էլ չի պահանջի։ Այդ տեսակ չաբաթաթերթ անվարձ թղթակիցներ կունենայ ամեն կողմից, մենք մեր կողմից խոստանում ենք այնքան թղթակցութիւններ ուղարկել, որ հազիւ թէ կը տեղաւորվեն չաբաթաթերթի մէջ։ Ամօթ հարուստ հայերին, եթէ այդ տեսակ գործ չը կատարեն։

—

Ռուս լրագիրները հաղորդում են որ Նէժին քաղաքում պատահել է այս օրերս հրէաների մի սարսափելի ջարդ։ Հրէաների բոլոր խանութները և տները ոչնչացրած են, նրանց ապրանքները ջուրն են նետած։ Անկարգութիւնը դադարեցրած է զօրքերի միջամտութեամբ։

—

«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է որ Ս. Պետերբուրգում դիտաւորութիւն կայ հիմնելու մի բիւրո անգրագէտ մարդկանց համար խնդիրքներ և նամակներ գրելու համար։

—

Մեզ պատմում են որ մի Թիֆլիսեցի ծննդկան կին դիմում է մի քահանայի հաղորդվելու համար։ Քահանան հարցնում է արդեօք խոստովանվել է կինը։ Սա պասասխանում է. «իմ խիղճս աւելի հանգիստ է չը խոստովանված սուրբ հաղորդութիւնն ընդունել, քան թէ չոքել այժմեան մեր քահանաների առջև, որոնք հասարակ մահկանացուներից էլ աւելի անբարոյական են. իմ խիղճս չի ների ինձ այդ տեսակ հովիւներին իմ մեղքերս խոստովանել. առաջ ինքներդ դրստվեցէք, յետոյ մեզ խոստովանեցրէք։» Այդ լսելով քահանան մերժում է հաղորդութիւն տալ ճշմարտախօս կնոջը։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են։ «Կառավարութեան թոյլտուութեամբ 1880 թվի սեպտեմբեր ամսից բացված են Շամախու քաղաքային ուսումնարանում մանկավարժական կուրսերը, որտեղ պիտի պատրաստվեն գիւղական կամ ծխական դպրոցների դաստիարակիչներ։ Այդտեղ ընդունվում են թէ քաղաքային դպրոցի վերին, այսինքն երրորդ դասատնում աւարտողները և թէ նրանք, որոնք կարողանում են հարցաքննութիւն տալ։ Այս տարի այդ մանկավարժական կուրսերում աւարտեցին իրանց ուսման ընթացքը 6 աշակերտներ, որոնցից հինգը հայեր են և մի ռուս։ Սրանցից միայն երեքը, որոնց թւում և ռուս ուսումնաւարտը, նիւթական միջոցներ ունեն, որ կարողանան մտնել ուսուցչական ինստիտուտը, իսկ մնացած երեքը, ինչքան էլ ուզենային շարունակել իրանց մանկավարժական կըրթութիւնը, անկարող են, կատարելապէս չքաւոր լինելով։ Վատ չէր լինի եթէ մեր գրամատէրերը նիւթապէս օգնէին նրանց իրանց նպատակին հասնելու համար։» Ո՞ւր է մի հայոց բարեգործական ընկերութիւն։

—

Մեզ գրում են ԿՈՒԼՊԻՑ հետեւեալը։ «Ձեր լրագրի № 107 մէջ կարդացի Իգդիրից գրած նամակը աղահանութեան մասին, որի մէջ նամակագիրը առաջարկում է 16 հարցեր, որոնց ես ժամանակով գուցէ կը պատասխանեմ մանրամասնաբար։

—

«Новости» լրագիրը հաղորդում է որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի մտցնել Լեհաստանում տեղական լեզուով դասաւանդութիւնը տարրական դպրոցներում, ընդարձակել լեհական լեզուի, գրականութեան և պատմութեան մատակարարութիւնը միջնակարգ դպրոցներում և ընդարձակել Լեհաստանի մամուլի ազատութեան իրաւունքը։ Վարշավայի գեներալ-նահանգապետի Ալեքսինսկու Ս. Պետերբուրգ գալը, ասում են, կապ ունի այդ մտադրված ռէֆորմաների իրագործման հետ։

—

Ռուսաց ամբողջ ազատամիտ մամուլը, առանց քննելու «Գոլոս» լրագրի դադարման հիմնական պատճառները, խոր ցաւակցութիւն է յայտնում նոյն իսկ այդ լրագրի վեց ամսեայ դադարման առիթով։ «Русскій Курьеръ» նուիրել է այդ հարցին մի առաջնորդող յօդուած, որի մէջ, ինչպէս և «Порядокъ», «Страна», «Московскій Телеграфъ» և ուրիշներ, ցանկութիւն է յայտնում որ վերջապէս լրագրութիւնը ազատվի ադմինիստրացիայի կամայականութենից և ենթարկվի դատաստանական իրաւասութեանը։

—

Վիէննայի «Journal d'Orient» լրագիրը արդէն սկսել է տպել յօդուածներ հայերի մասին։ Այդ յօդուածներից մինը «Մասիս» լրագիրը արտատպել էր իր յուլիսի 30-ի համարում։ Մեզ խնդրում են յայտնել որ յիշեալ լրագրին գրվել ցանկացողները թէ մի ամբողջ տարով, թէ վեց ամսով, կարող են փոքրը (8 ռուբլ կամ 4 ռուբլ) իրանց հասցէի հետ միասին ուղարկել կամ «Մշակի» խմբագրութիւնը, կամ ուղղակի Վիէննա, բայց ոչ թէ անմիջապէս «Journal d'Orient» լրագրի խմբագրութեանը, այլ հետեւեալ հասցէով, Wien (Австрія) M. H. Hovhannessian, pour remettre au «Journal d'Orient»։ Փոքի հետ, թէ մեզ, թէ Վիէննա, բաժանորդը անպատճառ պէտք է ուղարկէ և իր հասցէն։

—

«С. Петерб. Вѣдомости» լրագրի № 177 մէջ տպվեցաւ մի բանասիրական «Археологическій съѣздъ въ Тифлисѣ» վերնագրով։ Գրողը իրան ցոյց է տալիս լեզուագիտութեան և հնագիտութեան մէջ հմուտ անձն, բայց զարմանալի է որ այդ յօդուածի և «Голосъ» լրագրի № 144 թղթակցութեան մէջ Էմինի դէմ, որ մենք արտատպեցինք «Մշակի» մէջ, մեծ նմանութիւն ենք գտնում ոճի, գրելու ձևի վերաբերութեամբ։ Նոյն հայհոյանք, նոյն կոպիտ վարմունք Էմինի դէմ։ Գուցէ Էմինը մեծ սխալներ էլ անում է իր գրուածքի մէջ Մովսէս Խորենացու վերաբերութեամբ, բայց մենք դարձեալ չենք հասկանում ինչ նպատակ պէտք է ունենայ մարդը այդ աստիճան հայհոյական ոճով գրելու, խօսելով ծանր, լեզուագիտական, պատմական և հնագիտական հարցերի մասին։ Կարելի էր քննադատել սառը և քաղաքավարի կերպով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Բելգիական «Independance Belge» լրագրում կարդում ենք հետեւեալ դատողութիւնը։

Գամբէտտայի ճառը, որ նա ասեց Տուրի մէջ, ոչ ոքին չը բաւականացրեց։ Հանրապետականները դժգոհ են, մանաւանդ արմատական հանրապետականները։ Ոմանք ասում են թէ նա շատ քիչ է խօսել, ոմանք պնդում են թէ շատ երկար է խօսել։ Արմատական կուսակցութիւնը իր օրգաններում մեղադրում է Գամբէտտային, թէ նա ձգտում է դէպի դիկտատուրա։ Բայց, աւելացնում է լրագիրը, Գամբէտտան այնքան զգոյշ է, որ այդ տեսակ սխալ և վտանգաւոր ընթացք չի բռնի։

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

„Донская Пчела“ լրագիրը տպել է հետեւեալ հեռագիրը։ „Բերլինից հեռագրում են Standart անգլիական լրագրին, թէ մինչև որ լորդ Դիւֆերին ճնշում է ներգործում Թիւրքաց կառավարութեան վրա Թիւրքաց Հայաստանի մէջ ռէֆորմներ մտցնելու վերաբերութեամբ, այդ ժամանակ պատմում են իբր թէ կոմս Լորիս-Մէլիքով գրել է մի նամակ Ներսէս պատրիարքին Կ. Պոլիս, որի մէջ նա համոզում է սրբազանին այլ ևս չը պահանջել ռէֆորմներ, որոնց իրագործելը կարող էր միայն Թիւրքիայի իշխանութեանը աւելի ոյժ տալ։ Կոմսը իբր թէ աւելացնում է իր նամակի վերջը, որ մօտ է այն ժամը, երբ հայերը բոլորովին ազատված կը լինեն օսմանեան լուծից։“ Այդ լուրից „Донская Пчела“ լրագիրը եզրափակում է, որ երևի եւրոպական պետութիւնները վճռել են ոչ թէ ռէֆորմներ պահանջել Թիւրքաց Հայաստանի համար, այլ վերականգնեցնել Թիւրքաց Հայաստանի կատարեալ քաղաքական անկախութիւնը։ Այդ միտքը ռուսաց լրագիրը յայտնում է իր № 57 մէջ (օգոստոսի 2-ին), իսկ մի քանի համարներից առաջ նոյն „Донская Пчела“ և ուրիշ ռուս մի քանի լրագիրներ տպել էին այն լուրը, թէ որովհետև մինչև այժմ Թիւրքիան պարտ է Ռուսաստանին պատերազմական ծախսերը (կոնտրիբուցիա) և այդ ծախսերը չէ վճարում, Ռուսաստանը դիտաւորութիւն ունի այդ ծախսերի հաշուում պահանջել Թիւրքաց Հայաստանը, և այդ երկիրը միացնել Անդրկովկասին։ Եթէ ուղիղ

նի, որը փարիզէն մօտ մի ժամուայ ճանապարհ է։ Հոյակապ եկեղեցին մտանք թէ չէ՝ պահապանը մեր առաջը ընկաւ և միայն գաղղիացուն յատկացեալ քաղաքավարութեամբ մեզ ցոյց տուեց ամեն բան երկար ու բարակ պատմութիւններ անելով ամեն մի թագաւորական դամբարանի, ամեն մի արքայազնի գերեզմանի առաջ. փոքրիկ խաչ մի, արքայական թագ մի, ժանգոտված պղնձէ ճրագակալ մի չը մնաց, որի հետ մեզ չը ծանօթացներ պերճախօս գաղղիացին. մէկ ժամէն աւելի պտտեցրեց մեզ նա եկեղեցու մէջ, բայց տակաւին Լեոնի անունը չարտասանեց։ Վերջապէս նա քաղաքավարութեամբ մեզ դլուխ տուաւ ասելով՝ որ մենք բոլորը տեսանք. «իսկ հայոց թագաւոր Լեոն Զ-ի գերեզմանը» հարցրի ես։ «Ախ, պարոնայք, ներեցէք, ես չը գիտէի, թէ դուք հայ էք, որովհետև միայն հայերը երբէմն գալով այստեղ հետաքրքրվում են տեսնել իրանց թագաւորի գերեզմանը», այս ասելով նա մեզ տարաւ դէպի եկեղեցու ձախ կողմի մի խորշ, որտեղ միայնակ գտնվում էր Լեոնի գերեզմանը։ Գերեզմանի վրա պարկած է Լեոն Զ-ի սպիտակ մարմարիոնէ մարդահասակ արձանը՝ թագը գլխին և գաւազանը ձեռքին։ Ինչպէս զարմացայ, երբ տեսայ, որ գերեզմանի արձանագիրը միայն գաղղերէն է, իսկ հայերէն մի բառ անգամ չը կայ։ 1393 թուականէն մինչև այսօր քանի քանի հայեր են եղել Փարիզ և գնացել այդ գերեզմանը տեսնելու, մինթէ և ոչ մէկի մտքովը չանցաւ մի փոքր քարէ կամ պղնձէ տախտակի վրա փորագրել տալ հայերէն բառերով մեր վերջին թագաւորի անունն ու մահուան թուականը և տեղաւորել տալ գերեզմանի վրա, մինթէ դրա համար էլ մեծ ծախս է պէտք. ո՜հ, որքան անհոգ ենք մենք, հայերս....

Դեռ Նիս եղած ժամանակս բաղդս ինձ յաջողեց ծանօթանալ մի պոլսեցի հայրենասէր և պատուարժան հայի հետ՝ պ. Ջունդ անունով, որը բաւականին գործած է ազգային գործոց մէջ և ամեն ազգօգուտ սկզբանց մէջ պարագլուխ է կանգնած, թէպէտ և շատերի նման փող փչել և թմբուկ զարնել չէ տուած։ Երբ մենք կը պատահէինք միասին, որ կը մնէր բաւական յաճախ, պարոնը միշտ կը խնդրէր ինձ պատմել մեր ազգային հերոսների վրա, որոնք հրաշակաւոր եղան վերջին ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ և երբ ես կը պատմէի կոմս Լորիս-Մելիքովի, Լազարեվի, Տէր-Ղուկասովի և Շելկովնիկովի արածները՝ կը տեսնէի թէ ինչպէս ծերունու աչքերը կը վառվռէին, թշերը կը կարմրէին ու, կարծես, մարդը կայտառ երիտասարդի մի կը վերափոխվէր։ Օր մի բարեբաղդաբար պատահեցի այս ծանօթիս Փարիզի փողոցների մէկուն մէջ, «դուք ինձ ծանօթացրիք ձեր երևելի և մեզ սիրելի գեներալների հետ. ասաւ նա ինձ ձեռքս առնելով, այժմ կուզեմ ես ձեզ անձամբ ծանօթացնել մեր երևելի փաշայի հետ, եթէ ընդդէմ ոչինչ չունէք»։ Պարոնի խօսքը Եւրոպային լաւ ծանօթ և մօտիկ ժամանակներս Եգիպտոսում մեծ դեր խաղացած հայազգի Ն. փաշայի համար էր, որուն տեսնելը ի վաղուց ինձ համար բաղձանք եղած էր, ուստի հասկանալի է թէ ինչ սիրով ես ընդունեցի այդ առաջարկութիւնը։ Փաշան մեզ ուրախութեամբ ընդունեց և չը նայելով ոչ իր տարիքին և ոչ բարձր աստիճանին մեծ սիրելութիւն ցոյց տուաւ (դա ինձ համար մէկ նոր բան էր, որովհետև յայտնի է թէ հայ աստիճանաւորը ինչ արհամարհանօք է վարվում իրենից ստորինի հետ)։ Առաջին վարկեանէն ես գրավվեցի փաշայէն, որովհետև ուշադրութեամբ ունդրելով նրա դէմքի գծագրութիւնը, ես նմանութիւն գտայ լուսահոգի Արզաս Արտեմիչ Տէր-Ղուկասովի հետ, իսկ այս վերջինս որքն չէր գրաւում միմիայն իր գեղեցիկ և իմաստալից աչքերով, մի կողմ թողնելով նրա առաքինի յատկութիւնները։ Մի քանի ընդհանուր հարցմունքներից յետոյ փաշան ցանկութիւն յայտնեց իմանալ ռուսաբնակ հայերի ներկայ տնտեսական, քաղաքական և մտաւորական դրութիւնը. ես մի քանի խօսքերով նկարագրեցի այդ դրութիւնը, ասելով՝ որ ռուսաց օրէնսդրութեան ու ներքին քաղաքականութեան առջև ոչ մի զանազանութիւն չը կայ բնիկ ռուսի և այլազգի հպատակների մէջ, ուրեմն վերջիններիս դիմաց արձակ համարձակ բաց են այն բոլոր ճանապարհները, որոնք տանում են դէպի լուսաւորութիւն և բարօրութիւն։ «Ես էլ այդպէս էի կարծում, որովհետև ռուսաց տէրութիւնը եւրոպական քաղաքակրթեալ և արդարադատ տէրութիւններէն մէկն է, այժմ ձեր խօսքերէն աւելի համոզվեցայ, ասաւ փաշան և ամենը առաջ քաշեց, բայց ասէք խնդրեմ, արդեօք ձեր հայերը փոքր ի շատէ հետաքրքրվում են իրանց թիւրքիաբնակ եղբարց դրութիւնով, թէ բոլորովին մոռացել են նրանց»։ Ես իսկոյն չը պատասխանեցի այս հարցին, այլ մի խոր հայեացք ձգեցի հարցնողի վրա, կուզէի իմանալ այդ իսկ նրա ցանկութիւնն է, թէ միայն ինձ, իբրև իր հիւր խօսակցութեամբ զբաղեցնելու համար է։ Փաշան անհանգիստ ելաւ. նա անհամբերութեամբ սպասում էր պատասխանիս։ «Թիւրքիաբնակ հայերի դրութիւնը այսօր մեզ համար օրական հարց է դարձել. մեր սեփական գիտոյքները այնքան մեր աչքով չեն գալի, որքան այդ տարապայմանների անելք դրութիւնը, սրա ապացոյց թող լինի այն ահագին օգնութիւնը, որ մենք արինք անցեալ տարուայ սովի ժամանակ (վայ իմ հոգուն, այստեղ փոքր ինչ չափիցն անցայ), բայց բացի նիւթականը մենք ուրիշ միջոց չունենք նրանց օգնելու և եթէ բոլորովին յուսակտուր չենք մի օր նրանց վիճակը բարւոքված տեսնելու, այդ էլ նրա համար է, որ մեր յոյսերը ձեզպիսի անձանց վրա է, փաշայ, ձեր անունը լաւ ծանօթ է Եւրոպային և եթէ կամենաք, կարող էք օգնել ձեր ազգին»։

Այժմ հերթն ինձ էր, ես էի սպասում նրա պատասխանին և լաւ նշմարեցի, թէ ինչպէս իմ վերջին խօսքերը դուրեկան չէին պարոնին, բայց նա հարկադրված էր մի բան ասել, ուստի ուսերը վերքաշեց ու փոքր ինչ ձայնը բարձրացնելով՝ ասաց. «ինչ անեն մեզպէսները, երբ մեր մէջ միաբանութիւն չը կայ, մինթէ Բերլինի աւագաժողովի ժամանակ ես չը տուի մեր նոց իմ ծրագիրը, *) որ չընդունեցին, որ իմ թողած, նրանք իրանցը ներկայացրին, որ անարժան համարեցին ինձնից խորհուրդ հարցնել, ես ինչ անեմ, ինչ մեղ ունեմ. վերեւին երկու հոգեորական ուղարկեցին աւագաժողովին, ինչ լինեցին նրանք, Սան-Ստէֆանոյի դաշնագրութեան 16-որդ յօդուածը 61-ի փոխել տուին, մեծ բան արին, չէ՞ բարեկամ»։

— Կատարելապէս իրաւունք ունէք դժգոհ լինելու, ձերդ գերազանցութիւն, մերոնք մեծ սխալ արին, բայց այդ սխալը ոչ թէ գիտութեամբ արին, այլ անդիտութեամբ և այժմ արդէն ուշ է դրա ուղղելը, սակայն մինթէ մնում է միայն ձեռները խաչել և նստել, մինթէ չը կայ մի հնար որ և իցէ կերպով նորէն հարցը առաջ բերել»։ «Դրա համար, պատասխանեց փաշան, պէտք է որ կրկին մի աւագաժողով լինի, առանց դրանց ոչինչ չի լինի»։ «Ի՞նչպէս, բացականչեցի ես զարմացմամբ, ուրեմն պէտք է սպասենք, որ Թիւրքը պատերազմ հրատարակէ մի տէրութեան հետ, կրկին աւագաժողով լինի

*) Արժէ, որ այդ ծրագրի հետ ծանօթանայ ընթերցողը. յոյս ունեմ որ մի օր նա լոյս կը տեսնի պատուական «Մշակի» էջերի մէջ։

է կոմ Լորիս-Մելիքովի Ներսէսին գրած նամակը, նա ուրեմն ասելով թէ ժամը մօտ է երբ օսմանեան հայերը բոլորովին կազատվեն օսմանեան լուծից, դրանով հասկացել է որ ամբողջ Հայաստանը միացրած կը լինի Ռուսաստանի հետ, ինչպէս և հաղորդել էին մի քանի շաբաթ առաջ թէ ռուս և թէ օտար լրագիրները։

ԱՆԳԼԻԱ.

Լօնդօնի տուած տարեկան սովորական ճաշի ժամանակ Գլադստօն մի ճառ արտասանեց, որով ընդհանուր հայեացք գցեց կառավարութեան անցեալ տարվայ քաղաքականութեան վրա և յայտնեց իր կարծիքները Անգլիայի ընթացող ներքին և արտաքին գործերի մասին։ Նա ցաւակցութիւն յայտնեց մի քանի դէպքերի առիթով, որոնք ստորացնում են պարլամենտի արժանաւորութիւնը։ Այդ ակնարկութիւնները վերաբերում էին իրլանդական պատգամաւորների գործունէութեանը և պահպանողականների անհամբերողութեանը Բրէդլօի վերաբերութեամբ։ Գլադստօն յանդիմանեց պահպանողականներին, որ նրանք ժողովրդական օրինաւոր ներկայացուցչին արգելեցին մտնել պարլամենտը, պատճառ բերելով նրա կրօնական համոզմունքների կասկածաւոր լինելը։ Ամենքը կը նկատեն նոյնպէս և այն, որ Գլադստօն թիւրքաց կառավարութիւնը բռնաւորութեան մասին բոլորովին այլ նշանակութիւն ունի, որովհետև այդ խօսքերը դիտմամբ են արտասանված։

Օգոստոսի 3-ին Բրէդլօի կուսակիցները մի ժողով կազմեցին, ուր Բրէդլօ ճառախօսեց։ Նա նկարագրեց այն տխուր անցքը, որի հետևանքը նրա արտաքսելն էր պարլամենտից։ Բրէդլօի պատմութիւնը ոչինչով չէ գանազանվում լրագրական յօդուածներից։ Բրէդլօ զանգատվում էր, որ նրան կոպտութեամբ դուրս արին պարլամենտից փոխանակ նրան բանտարկելու սպիկերին չը հնազանդվելու համար, ինչպէս օրէնքը պահանջում է։ Նա հաստատեց իր ասածը, որ, եթէ կամենայ, նրա շուրջ մի միլիոն մարդիկ կը հաւաքվեն։ Բայց մի և նոյն ժամանակ խորհուրդ տուեց իր բարեկամներին չափաւոր լինել և ասաց, որ բռնութիւնը յեղափոխական նշանակութիւն կունենայ, իսկ նա յեղափոխութիւն չէ ցանկանում։ Գլադստօն թէպէտ չափազանց յարգում է խղճի ազատութիւնը, բայց վճռել է կատարել պարլամենտի ցանկութիւնը Բրէդլօի վերաբերութեամբ։

Բօերների հետ դաշնագրութիւնը արդէն ստորագրված է։ Տրանսվալի մէջ կայացաւ տեղական առաջնորդների մի մեծ ժողով, որին մասնակցում էին անգլիական մասնաժողովի անդամները և բօերները։ Ժողովի ժամանակ յայտնվեցաւ անգլիական կառավարութեան դիտաւորութիւնները Տրանսվալի մասին։ Տեղացիներին թոյլ չը տուին խօսել։ Առաջնորդներից շատերը բողոքեցին այդ անարդարութեան դէմ։ Նրանք ասացին, որ Տրանսվալը բօերներին չէ պատկանում, որ տեղացիները չեն ճանաչում բօերների գերիշխանութիւնը և որ հարկաւոր դէպքում նրանք պատրաստ են զէնքը ձեռքին պաշտպանել իրանց իրաւունքները։ Անգլիայի մէջ Տրանսվալի գործերը շարունակ զբաղեցնում են անգլիական հասարակական կարծիքին։ Մի քանի անգամ ժողովներ են կայացել, որոնց ժամանակ բողոք է յայտնվել անգլիական կառավարութեան քաղաքականութեան դէմ բօերների վերաբերութեամբ։ Ժողովի ժամանակ ճառախօսներից մէկը ասաց, որ բօերները միայն մասամբ քաղաքակրթված են, որ նրանք զուրկ են գիտութիւնից և բնական խելքից և որ Անգլիայի տիրապետութիւնը բօերների համար շահաւէտ է։ Ասում են, որ բօերների մէջ ստրկութիւնը տարածված է։ Նրանք որսում են դրացի ցեղերին և նրանց ծախում են։ Այդ ժողովների ժամանակ կառավարութեան քաղաքականութիւնը պախարակվեցաւ։

Լօնդօնի մէջ օգոստոսի 3-ին բացված բժշկական կօնգրեսին չեն մասնակցում բժիշկ կանայք, մինչդեռ դրանից առաջ եղած վեց կօնգրեսներին նրանք մասնակցել են և նրանց իրաւունքները սահմանափակված չեն եղել։ Մօտ 40 բժիշկ կանայք բողոքեցին նրանց իրաւունքները այս անգամ սահմանափակելու համար։

ԳԵՐՄԱՆԻԱ

„Germania“ լրագիրը կարծում է որ այն տեսակցութիւնը որ կայանալու է Միւնխէնի մէջ աւստրիական կայսրի, բաւարական, սակսօնական և վիւրտեմբերգիական թագաւորների մէջ՝ նպատակ ունի ստորագրել այն վճիռը, որով Բադէնի հերցոգին տրվելու է թագաւորի տիտղոսը։ Այդ, ի հարկէ, կը կայանայ գերմանական կայսրի համաձայնութեամբ, որ արդէն ձեռք բերված է Գաշտէյնի տեսակցութեան ժամանակ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 օգոստոսի։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. չինական դեսպան Մարկիզ Ցզենգ օգոստոսի 3-ին այցելեց արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ Գիրսին։ Այս շաբաթ Ս. Պետերբուրգի մէջ սպասում են ծովային մինիստրութեան կառավարիչ Լեսօվսկուն, որ վերադառնում է անցեալ տարի չինական ջրերը ուղարկած արշաւանքից։ Ս. Պետերբուրգի քաղաքապետ գեներալ Բարանովի կարգադրութեամբ սկսած Ս. Պետերբուրգի պոլիցիայի քննութենից յայտնվեցան ամենանմխիթար փաստեր, ցոյց տալով, որ պոլիցիայի վերանորոգութեան գործը կարօտ է արմատական փոփոխութիւնների։ „С. Петерб. Вѣдом.“ լրագիրը հաղորդում է, որ շուտով պէտք է վճռվի պալատական մինիստրութեան ոչնչացնելու հարցը։ „Новости“ լրագիրը լսել է, որ կառավարչական շրջանների մէջ հարց է զբաղեցրած երկաթուղիներով գնացողների տոմսակներից վերցնող պետական հարկը ոչնչացնելու մասին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 12 կ., երկրորդ 94 ր. 75 կ., երրորդ 94 ր. 75½ կ., չորրորդ 94 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 228 ր., երկրորդ 227 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91 ր. 87 կ., ոսկի 7 ր. 77 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,78 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 220 մարկ, Փարիզի վրա արժէ 271 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

է կոմ Լորիս-Մելիքովի Ներսէսին գրած նամակը, նա ուրեմն ասելով թէ ժամը մօտ է երբ օսմանեան հայերը բոլորովին կազատվեն օսմանեան լուծից, դրանով հասկացել է որ ամբողջ Հայաստանը միացրած կը լինի Ռուսաստանի հետ, ինչպէս և հաղորդել էին մի քանի շաբաթ առաջ թէ ռուս և թէ օտար լրագիրները։

ԱՆԳԼԻԱ.

Լօնդօնի տուած տարեկան սովորական ճաշի ժամանակ Գլադստօն մի ճառ արտասանեց, որով ընդհանուր հայեացք գցեց կառավարութեան անցեալ տարվայ քաղաքականութեան վրա և յայտնեց իր կարծիքները Անգլիայի ընթացող ներքին և արտաքին գործերի մասին։ Նա ցաւակցութիւն յայտնեց մի քանի դէպքերի առիթով, որոնք ստորացնում են պարլամենտի արժանաւորութիւնը։ Այդ ակնարկութիւնները վերաբերում էին իրլանդական պատգամաւորների գործունէութեանը և պահպանողականների անհամբերողութեանը Բրէդլօի վերաբերութեամբ։ Գլադստօն յանդիմանեց պահպանողականներին, որ նրանք ժողովրդական օրինաւոր ներկայացուցչին արգելեցին մտնել պարլամենտը, պատճառ բերելով նրա կրօնական համոզմունքների կասկածաւոր լինելը։ Ամենքը կը նկատեն նոյնպէս և այն, որ Գլադստօն թիւրքաց կառավարութիւնը բռնաւոր և ճնշող անուանեց և նկատեց, թէ Անգլիայի օգնութեամբ Թէսսալիան և Էպիրոսը ազատված են թիւրքաց ճնշումից։ Անգլիայի այժմեան յարաբերութիւնները Թիւրքիայի հետ բարեկամական են և Գլադստօնի յայտնութիւնը թիւրքաց կառավարութեան բռնակալութեան մասին երևի փոթորիկ կը բարձրացնի թիւրքաց քաղաքական շրջանների մէջ։ Առհասարակ Գլադստօն չէ ծածկում իր կարծիքները օտար կառավարութիւնների գործողութիւնների մասին և հարկաւոր ժամանակ յայտնում է նրանց հրապարակ, ուշադրութիւն չը դարձնելով դիպլոմատիական սովորութիւնների վրա։ Մի տարի ու կէս սրանից առաջ, երբ Գլադստօն ընտրութիւնների ժամանակ յաղթեց Բիկոնսֆիլդին, այնպիսի խստութեամբ խօսեց Աւստրիայի դէմ, որ նոր մինիստրութիւն կազմելուց յետոյ նա ստիպված եղաւ պաշտօնապէս ներողութիւն խնդրել աւստրիական կառավարութիւնից սովորական քաղաքական բարեկամութիւնը պահպանելու համար։ Այս անգամ Գլադստօնի յայտնած կարծիքը թիւրքաց կառավարութեան բռնաւորութեան մասին բոլորովին այլ նշանակութիւն ունի, որովհետև այդ խօսքերը դիտմամբ են արտասանված։

Օգոստոսի 3-ին Բրէդլօի կուսակիցները մի ժողով կազմեցին, ուր Բրէդլօ ճառախօսեց։ Նա նկարագրեց այն տխուր անցքը, որի հետևանքը նրա արտաքսելն էր պարլամենտից։ Բրէդլօի պատմութիւնը ոչինչով չէ գանազանվում լրագրական յօդուածներից։ Բրէդլօ զանգատվում էր, որ նրան կոպտութեամբ դուրս արին պարլամենտից փոխանակ նրան բանտարկելու սպիկերին չը հնազանդվելու համար, ինչպէս օրէնքը պահանջում է։ Նա հաստատեց իր ասածը, որ, եթէ կամենայ, նրա շուրջ մի միլիոն մարդիկ կը հաւաքվեն։ Բայց մի և նոյն ժամանակ խորհուրդ տուեց իր բարեկամներին չափաւոր լինել և ասաց, որ բռնութիւնը յեղափոխական նշանակութիւն կունենայ, իսկ նա յեղափոխութիւն չէ ցանկանում։ Գլադստօն թէպէտ չափազանց յարգում է խղճի ազատութիւնը, բայց վճռել է կատարել պարլամենտի ցանկութիւնը Բրէդլօի վերաբերութեամբ։

Բօերների հետ դաշնագրութիւնը արդէն ստորագրված է։ Տրանսվալի մէջ կայացաւ տեղական առաջնորդների մի մեծ ժողով, որին մասնակցում էին անգլիական մասնաժողովի անդամները և բօերները։ Ժողովի ժամանակ յայտնվեցաւ անգլիական կառավարութեան դիտաւորութիւնները Տրանսվալի մասին։ Տեղացիներին թոյլ չը տուին խօսել։ Առաջնորդներից շատերը բողոքեցին այդ անարդարութեան դէմ։ Նրանք ասացին, որ Տրանսվալը բօերներին չէ պատկանում, որ տեղացիները չեն ճանաչում բօերների գերիշխանութիւնը և որ հարկաւոր դէպքում նրանք պատրաստ են զէնքը ձեռքին պաշտպանել իրանց իրաւունքները։ Անգլիայի մէջ Տրանսվալի գործերը շարունակ զբաղեցնում են անգլիական հասարակական կարծիքին։ Մի քանի անգամ ժողովներ են կայացել, որոնց ժամանակ բողոք է յայտնվել անգլիական կառավարութեան քաղաքականութեան դէմ բօերների վերաբերութեամբ։ Ժողովի ժամանակ ճառախօսներից մէկը ասաց, որ բօերները միայն մասամբ քաղաքակրթված են, որ նրանք զուրկ են գիտութիւնից և բնական խելքից և որ Անգլիայի տիրապետութիւնը բօերների համար շահաւէտ է։ Ասում են, որ բօերների մէջ ստրկութիւնը տարածված է։ Նրանք որսում են դրացի ցեղերին և նրանց ծախում են։ Այդ ժողովների ժամանակ կառավարութեան քաղաքականութիւնը պախարակվեցաւ։

Լօնդօնի մէջ օգոստոսի 3-ին բացված բժշկական կօնգրեսին չեն մասնակցում բժիշկ կանայք, մինչդեռ դրանից առաջ եղած վեց կօնգրեսներին նրանք մասնակցել են և նրանց իրաւունքները սահմանափակված չեն եղել։ Մօտ 40 բժիշկ կանայք բողոքեցին նրանց իրաւունքները այս անգամ սահմանափակելու համար։

ԳԵՐՄԱՆԻԱ

„Germania“ լրագիրը կարծում է որ այն տեսակցութիւնը որ կայանալու է Միւնխէնի մէջ աւստրիական կայսրի, բաւարական, սակսօնական և վիւրտեմբերգիական թագաւորների մէջ՝ նպատակ ունի ստորագրել այն վճիռը, որով Բադէնի հերցոգին տրվելու է թագաւորի տիտղոսը։ Այդ, ի հարկէ, կը կայանայ գերմանական կայսրի համաձայնութեամբ, որ արդէն ձեռք բերված է Գաշտէյնի տեսակցութեան ժամանակ։

և այդտեղ միայն վճռվի հայոց հարցը, չէ՞ որ մինչև այդ ժամանակ հայերը Թիւրքիայի հարստահարութեան տակ բոլորովին կոչնչանան, էլ ում համար է այն ժամանակ հարցի վճռումը. դրան մենք ասում ենք — գնա մեռիր, արի սիրեմ։ ‹Ուրիշ հնար չեմ տեսնում առ այժմ› ասեց փաշան ու վերկացաւ տեղից։ իմացայ որ աուդիենցիան վերջացած է, վերցրի գլխարկս ու ծանօթիս հետ միասին տխուր տրտում դուրս ելանք փողոց։ Հազիւ թէ մի տասը քայլ հեռացել էինք, երբ մեր դէմուդէմը եկող մի բարձրահասակ ու հաստ մարդ կանգնեցրեց հետս գնացող պարոնին ասելով՝ ‹բարեաւ ձեզ, պ. Ջունդ, սա ուսկէ կուգաք ասանկ տխուր, Գըլխնիդ քարշ, չըլլայ փաշայէն›։ ‹Այո, էֆենդի, պատասխանեց բարեկամս, անկէ կուգանք, բայց թոյլ տուէք ծանօթացնեմ ձեզ ռուսաստանցի հայազգի բժշկի մը հետ›. մենք բարևեցինք իրար, դիմացինս պ. Օ. էֆենդին էր, պօլսեցի ազգասէրին մէկը, որոյ անունը շատ անգամ լսած պէտք է լինի ընթերցողը։ ‹Է՛յ, փաշային հետ հայոց հարցի մասին պիտի որ խօսած ըլլաք և նա ձեզ զուրցած է, որ հայերը սխալներ ըրին, իրեն ծրագիրը չընդունեցին և այլն և այլն, ասանկ չէ՞ մի›։ ‹Այո, պատասխանեցի ես զարմանալով, թէ որտեղից գիտէ դա մեր խօսակցութեան առարկան։ ‹Իշտէ ատանկ է, երբ մեր ուզածը չէք ընդունիր, լաւ չէք ըներ, միշտ սխալների մէջ կընկնիք, ուստի մեղաւորը դուք էք, իսկ մենք մեր պարտքէն ազատվեցանք։ Է՛հ եղբայր, խօսքեր, խօսքեր միայն ու գործ չը կայ.... ինչ և իցէ, մնաք բարեաւ, հոս պիտի մտնեմ, գործ մունիմ,›. այս խօսքերով հեռացաւ մեզնից իմ նոր ծանօթը։

‹Ասէք, խնդրեմ, պ. Ջունդ, այդ ինչ մարդ է, ես զարմացած եմ›։

‹Իրաւունք ունէք զարմանալու, դա այն մարդն է, որ իր ծառայութիւնը, իր պաշտօնը, իր բարձր դրութիւնը զոհեց ազգին, միշտ նրա համար կը մտածէր, միշտ նրա համար կաշխատէր և վերջապէս այնքան ըրաւ, որ տաճկի կառավարութիւնը ծուռ աչքով նայեց վրան և այժմ դա չէ կարող վերադառնալ ի Պոլիս, օտարութեան մէջ կը թափառի՝ գրեթէ օրվան հացին կարօտ›։

Թող բարեսիրտ ընթերցողը չը նեղանայ ինձանից, որ ես միշտ տխուր ու անմխիթար լուրեր կը հաղորդեմ իրեն. ինչ անեմ, այդ իմ մեղը չէ. ինչ կը տեսնեմ, ինչ կը լսեմ, այն էլ կը գրեմ, երբէք լաւը չեմ թագցնիր ու միայն վատի վրա չեմ խօսիր, ահա օրինակ մի երկու ուրախալի լուրեր ունեմ հաղորդելու և մեծ ուրախութեամբ կը գրեմ։

Նախ՝ Փարիզու հայ ուսանողները կամեցան, որ իրանց ընկերութիւնը Ֆրանսիայի կառավարութենէն ճանչցվի և այդ ընկերութեան կանոնագիրը հաստատվի, դրա համար նրանք խնդիրք տուին ներքին գործոց նախարարին, սա պահանջեց որ այդ խնդիրքը ստորագրեն 21 հայազգի անձինք, ոչ—ուսանողներ. Փարիզ գտնվող հայերը չը զլացան այդ պահանջմունքը կատարելու և ստորագրողների շարքում տեսայ և մեր հռչակաւոր նկարիչ Ց. Այվազովսկու անունը. կասկած չը կայ, որ շատ շուտով ուսանողների ցանկութիւնը պիտի կատարվի, միայն մնում է անդամների թիւը շատացնել. այդ էլ կախված է մեզնից— հայերից։ Երկրորդ՝ մեծապատիւ Այվազովսկին մեծ ուրախութեամբ անդամ գրվեց վերոյիշեալ ընկերութեանը և իր մէկ պատկերի կէսը ընծայեց նրա գանձարանին։ Պարզեմ խօսքս. պարոնի մէկ պատկերին Լօնդրայում տալիս են մի յայտնի գումար, նա չէր ուզում այդ գնով ծախել, բայց յետոյ յանձնեց իր գործակատարին, որ ծախէ այդ գնով և ստացած փողի կէսը, որ է մօտ 5 հազար ֆրանկ, ուղարկէ ընկերութեան. փառք և պատիւ նրա գերահռչակ անուան։ Երրորդ՝ Լօնդրայում մի զմիւռնացի ազգասէր հայազգի կը բնակի՝ Իշխան Ալսան Ապրօ Բագրատունի անունով, որը մի ընկերութիւն է կազմել Լօնդրայում հայոց Միացեալ ընկերութեան օգնելու համար. այդ ընկերութեան անդամները անգլիացիք են, ի թիւս նրանց կան մի քանի երևելի լորդեր և «Times» լրագրի գլխաւոր խմբագիրը. այժմ, ինչպէս կը լսեմ, պարոնը մտադիր է գալ Փարիզ և այնտեղ ես մի այդպիսի ընկերութիւն կազմել։ Ահա ինչ կը գրէ Մանչեսթրէն ծանօթիս մէկը այդ անձի մասին. ‹Զը գիտեմ լսած էք արդեօք՝ Իշխան Բագրատունի մը ունինք Նաթօլի բնակող, բայց այս մէկ երկու տարուանս մէջ երևան ելաւ հոս եկաւ, այժմ Լօնդոն կը բնակի և սրա արդեամբը անցեալ երեքշաբթի օր Վէսթմինըստրի մայր եկեղեցւոյն Երուսաղատունը ժողովք մը եղաւ նախագահութեամբ աւագ երէց Նշանաւոր Տին Ըսթանլիի *) ի նպաստ մեր Միացեալ ընկերութեան և մասնաժողով մը կազմվեցաւ, որուն բաւական ազնուական անձինք անդամ են անդրիացւոցմէ›։ Փոքր ինչ յետոյ հետևեալը կը գրէ նոյն պարոնը Մանչեսթերի հայերի մասին. ‹մեր Մանչեսթերի հայոց ազգային զգացումը հետևեալէն դուշակեցէք. ասկից 15 օր առաջ Բարլամէնթի մէջ ‹Կիպրոս›-ի մասին դաշնագրութեան վիճաբանութեան առթիւ՝ մեր հայասէր անգլիացի բարլամէնթի անդամք հայոց խնդիրը յառաջ բերին և արտաքին գործոց քարտուղար Սըր-Զարլս Տիլքէն և Կլատստընէն ազդու խոստմունքներ առնելու պատճառ եղան հայոց խնդրոյ մասին. Լօնդօնի պր. Յակոբեանը (մի երիտասարդ հայ) Կլատստընին և արտաքին գործոց պաշտօնեայ Լորդ Կրանվիլին այս մասին շնորհակալութեան գիր մը կը պատրաստէ, որով այս պահուս հայոց վրա դրուած հազար ու մէկ բարբարոսութիւնները յիշելով կը խնդրէ, որ ժամ է հայկական խնդրոյն լուծումը նայուի և այլն և Հայաստանի կառավարիչ եւրոպացի մը ընտրվիլը կը խնդրէ (որովհետև տաճկի հայ կառավարիչ չընդունվիլը հասկցուեցաւ և դնէ ալնէ՝ մեր ուզածը չը պիտի ըլլայ և տաճկէն ալ դէշ հայ կամ յոյն մը պիտի ըլլայ)։ Ի՞նչ կըսէք, տղան կը հոգնի, կը պատրաստէ այդ թուղթը և անձամբ ծախս կընէ, կելլէ կը գայ հոս (արդէն ինքը աղքատ, բայց աչքը կուշտ մէկն) մեր ազգբրներուն ստորագրել տալու, ինչ կըսէք, չը ստորագրեցին բացի մի քանիսներէ և այն ալ կեղծ ստորագրութեամբ ոմանք և միւսներն ալ աննշան անձինքներ›։

Ժամանակ է արդէն վերջ տալ նամակիս՝ ներողութիւն խնդրելով բարեսիրտ ընթերցողից երկարախօսութեանս համար, միայն թողէք, խընդրեմ, մի երկու խօսք էլ ասեմ պ. Աբգարեանի վերաբերութեամբ. չը գիտէք, թէ ով է այդ պարոնը, դա Հնդկաստանցի հայ է մի, որ այժմ Լօնդրա կը բնակի և անհամար հարստութեան տէր է, դրա համար էլ զինքը հայոց Ռոճիլդ կը կոչեն, ժառանգ չունենալով և ինքը ծեր լինելով՝ նա այս մօտիկ ժամանակներս մի անգղիացի փոքրիկ աղջիկ վերցրեց իբրև որդի և իր բոլոր հարստութիւնը նրա վրա հաստատեց, կարծես թէ թշուառ Հայաստանի մէջ այդ աղջիկներից չէր գտնվի.....

Կ. Մելիք-Բեգլարեան

*) Մօտերքս ցաւօք սրտի կարդացի լրագիրներում այդ երևելի անձի մահվան լուրը։